

ՄԱՏԵՐԻԱԼԻՉՄ ԻՒ ԻՊԷԱԼԻՉՄ

III

Նիւթապաշտական տեսութիւնն ուրեմն հակուած է հոգեկանի նշանակութիւնը իրականութեան մէջ ստորացնելու և հոգեկան երևոյթները ընութեան ընթացքի իբրև աննշան և երկրորդական արդիւնքը ներկայացնելու: Սակայն նա ի նկատի ունի, որ ինչքան էլ փոքր լինի հոգեկան-բարոյական կեանքի դերը տիեզերքի մէջ, մեզ համար դա է միակ բանը, որ այս իրականութեանը նշանակութիւն և արժէք է տալիս: Երևակայինք մի աշխարհ, առանց այդ աննշան երևոյթների, — առանց զգացողութեան, մտածողութեան, կամքի և զգացմանց. մի աշխարհ, որտեղ գոյութիւն ունին միմիայն նիւթ և շարժողութիւն: Երևակայինք, նաև, որ մենք անզբաղսարհային վայրերից մտնէինք հոգեզուրկ մարմինների այդ աշխարհը, և մեզ ուղեկցէր մի մաթեմատիկոս-բնագէտ. նա մեզ ցոյց կտար աշխարհների համակարգութիւններ, կենդրոնական մարմիններ և արբանեակներ, զանգուածներ և շարժումներ, կը ներկայացնէր իւրաքանչիւրի վրայ կատարուող երկրաբանական և օդերևութաբանական երևոյթները, մակերևոյթների աստիճանաբար կազմուիլը: Մի առ ժամանակ մենք անշուշտ այդ ամենը կը տեսնէինք և կը լսէինք հետաքրքրութեամբ: Սակայն իբր այդ տիեզերաբան-բնագէտը շարունակ հէնց ցոյց տար և նոյն կերպով բացատրէր նոր աշխարհների համակարգութիւններ, մենք անհամբերութեամբ կը հարցնէինք. «բայց ինչու համար է այս ամենը. ինչ է նշանակում գնդաձև զանգուածների այս խաղը»: Եւ եթէ մեր առաջնորդը պատասխանէր, թէ դա է իրականութիւնն ինքը, և դրանից դուրս այլ ևս ոչինչ չկայ, այն ժամանակ մենք շփոթուած և հիասթափուած շուտ կը գայինք և կասէինք. «Եթէ յիրաւի այս է ամբողջ իրականութիւնը, եթէ նրա

մէջ ոչինչ չկայ, այլ միայն նիւթի զանգուածներ, շարժում և մաթեմատիքական օրէնքների ճշտութիւն, ապա ուրեմն բաւական է, այլ ևս պահանջ չանենք լսելու:

Այս տպաւորութիւնը չէր փոխուել, եթէ մի կենսաբան մօտենար մեզ և այս կամ այն տիեզերական մարմնի վրայ ցոյց տար անթիւ փոքրիկ ինքնաշարժ մարմիններ, այսպէս կոչուած օրգանիզմներ և բացատրէր նրանց ձևափոխութիւնների երկար շարքը միլիօնաւոր տարիների ընթացքում, մանրադէտի միջոցով դիտել տար միլիարդ բջիջները, որոնցից բաղկացած է մի այսպիսի մարմին, ցոյց տար մկանների և նեարդային համակարգութեան բոլոր շարժումները և նրանց մեքենական օրէնքները: Այս բոլորը տեսնելուց ու լսելուց յետոյ մենք դարձեալ բաւականութիւն չէինք ստանալ և շուարած կը հարցնէինք. «բայց ինչ՞նչ համար է այս ժխորը. թնչ է նշանակում այս ամենը»: Եւ եթէ մեր առաջնորդը պատասխանէր, թէ այդ է իրականութիւնն ամբողջովին և թէ դրանից դուրս ոչինչ չկայ, այն ժամանակ ձանձրոյթի ու գայրոյթի զգացումով շուտ կը գայինք այս դատարկ և անմիտ աշխարհից: Իսկ եթէ մէկը մօտենար մեզ և ասէր, թէ այդ տեսանելի երևոյթներին զուգընթաց կատարւում են անտեսանելի և դրանց հետ չհամեմատող երևոյթներ, որ ներքուստ զդում ու կրում են այդ էակները, այն է զգացողութիւններ, զգացումներ, ձգտումներ և մտքեր, եթէ նա մեզ սովորեցնէր շարժողութեան երևոյթներից այդ ներքին, անտեսանելի երևոյթները գուշակել ու հասկանալ, այն ժամանակ մենք լարուած ուշադրութեամբ կը հետևէինք և ախորժանօք կը լսէինք, և երբ նա սկսէր խօսել մարդկային հոգեկան կեանքից, մարդկային գործերից ու ցաւերից, մարդկային իմաստութիւնից ու յիմարութիւնից, այն ժամանակ մեզ կը թուէր, թէ այժմ միայն հասանք բուն իրականութեանը, կամ գոնէ իրականութեան այն մասին, որ մեզ է վերաբերում: Ուրիշ կերպ չէր վարուել նաև մի մատերիալիստ փիլիսոփայ, նոյն իսկ Հեկկեն ինքը: Որքան էլ նա համոզուած լինի, թէ հոգեկան կեանքի երևոյթներն ուրիշ ոչինչ են, բայց եթէ ուղեղի գործողութիւնների անդրադարձում, բայց և այնպէս հէնց այն անդրադարձումներն են, որ նրա համար ևս աշխարհը հետաքրքրական և իմաստալից են դարձնում. նա էլ շահագրգռուած է նրանով, որ այդ անդրադարձումները բարդում և դառնում են այն զարմանալի պրոցեսսը, որ մենք պատմութիւն և հոգևոր կեանք ենք անուանում: Եթէ ուղեղի այդ անդրադարձումները, հոգեկան երևոյթները չլինին, մատերիալիս-

տի համար ևս ամբողջ տիեզերը արժէք ու նշանակութիւն չէր ունենալ, և տիեզերական մարմիններն ուրիշ բան չէին լինիլ, բայց եթէ աւազի հատիկներ, որ ծովի եզերքին ալիքներէ և հողմերի խաղալիք են:

Նիւթապաշտական այս տեսութիւնը ազդեցութիւն ունի արդեօք բարոյականութեան և կենցաղի վրայ և թնշ ուղղութեամբ: Ընդհանուր տարածուած կարծիք է, թէ մատերիալիզմը մի վտանգաւոր վարդապետութիւն է. նա վերացնում է կրօնը, հաւատը դէպի իդէալները, խախտում է բարոյականութիւնը: Նրա գործնական հետևութիւնն այն է, թէ առաքինութիւնը դատարկ ցնորք է, խիղճը աւելորդ բեռ, բարոյական օրէնքները տէրտէրների հնարած: Կեանքի ճշմարիտ իմաստութիւնն է հնար եղածի չափ վայելել աշխարհը: Մատերիալիստական տեսութեան դէմ այսպէս բողոքողները պահանջում են, որ այդ վարդապետութեան առաջն առնուի ոչ լոկ դատողութիւններով, այլ նաև բռնի միջոցներով. նրանք քարոզում են, թէ պետական ոյժը պէտք է կռիւ մղէ վտանգաւոր նիւթապաշտ փիլիսոփայութեան՝ աթէիզմի դէմ, թէ նա այդ պէտք է անէ իւր իսկ գոյութիւնը պահպանելու համար, քանի որ մատերիալիզմից են բղխում նիհիլիզմ, անարխիզմ և սոցիալիզմ:

Անշուշտ իրականութեան մատերիալիստական տեսութեան և գործնական կոչուած նիւթապաշտութեան մէջ որոշ առըն չութիւն կայ, սակայն այդ առնչութիւնն այնքան պարզ չէ, ինչպէս սովորաբար կարծում են: Չի կարելի փսսել, թէ գործնական նիւթապաշտութիւնն առաջ է գալիս տեսականից իբրև նրա հետևանք: Առ հասարակ իրողութիւնն այն չէ, թէ վերացական տեսութիւնները որոշում են կեանքը, այլ այն, որ կեանքից է կախուած լինում այս կամ այն աշխարհայեացքին և վարդապետութեան յարելը: Տեսական մատերիալիզմի տարածումը մեծ մասամբ ոչ թէ պատճառ է այն բանի, ինչ որ գործնական նիւթապաշտութիւն ենք ասում, այլ հետևանք: Անշուշտ մատերիալիզմը իբրև տեսութիւն սկզբում զուտ տեսական հետաքրքրութիւնից և պահանջից, իրականութեան զուտ ֆիզիքական բացատրութեան պահանջից է առաջ եկել. բայց երբ նա միանգամ գոյութիւն ունի, գործնական մատերիալիզմը հակում ունի այդ տեսութիւնը իբրև իրեն համապատասխան աշխարհայեացք իւրացնելու: Պակաս չեն, ի հարկէ, լրջմիտ, արդարամիտ մարդիկ, նոյն իսկ բարոյական իդէալիստներ, որոնք յարած են մատերիալիստական փիլիսոփայութեան, և յարած են բարոյական մղումներով, անձնական հակումները և

շահերը զոհ բերելով, որովհետև նրանք այդ ուսումը համարում են իրականութեան այն ըմբռնումը, որ հիմնուած է ճիշտ գիտութեան վրայ, և հէնց ճշմարտասիրութիւնն ու գիտական մտածողութիւնը նրանց ստիպում են այդ տեսութիւնն ընդունել: Կան նաև շատերը, որոնք թէև բարոյական կեանքի շատ ստոր աստիճանի վրայ են կանգնած, բայց և այնպէս յարած են որևէ իդէալական վարդապետութեան, լինի այդ փիլիսոփայական թէ եկեղեցական, և յարած են ոչ լոկ շրթունքներով, հասկացողութեամբ և համոզմամբ:

Յամենայն դէպս, մեծամասնութեան վերաբերմամբ իրողութիւնն այն է, որ կեանքի վրայ ունեցած հայեացքի համապատասխան լինում է տեսական աշխարհայեացքը. սեփական կեանքի փորձերից է իւրաքանչիւրը իւր համար բացատրում կեանքի խորհուրդը, նոյն իսկ աշխարհի խորհուրդը:

Սակայն աշխարհայեացքն էլ իր կողմից ազդում է անշուշտ կեանքի վրայ: Մի իդէալիստական վարդապետութիւն, որ մարդու վստահեցնում է, թէ իրականութեան հիմքը գաղափարներն են, թէ մի բանական կամք սահմանել և որոշել է աշխարհի ընթացքն ու նպատակը, ներգործում է իրև խրախոյս, կեանքը գաղափարներին ծառայեցնելու: Կասկած չկայ նաև, որ նիւթապաշտական աշխարհայեացքը թուլացնում է ձգտումը դէպի բարձր նպատակներ. իրականութեան արժէքը կորչում է, երբ նա համարում է ուրիշ ոչինչ, բայց եթէ ատոմների համախմբում, որոնք անմիտ մեքենականութեան օրէնքներով իրար վրայ կուտակուած, մի անգամ ևս պատահաբար այնպիսի դասաւորութիւն են ստացել, որ նրանց ըստ երևոյթին խորհուրդ և նպատակ է տալիս: Այս հայեացքի ազդեցութեան տակ մենք այլ ևս չենք ըմբռնում մարդկային կեանքի խնդիրն ու կոչումը, Այս պատճառով իրաւացի պէտք է համարել այն կարծիքը, որ եթէ մատերիալիստական աշխարհայեացքը ընդհանուր համոզում դառնայ, ժամանակի ընթացքում կը փոխէ բարոյական կեանքի վիճակը, ամենից առաջ նա արգելք կը դառնայ բարձր, մաքառող, բարոյական իդէալիզմի երևան գալուն:

Եթէ այս այսպէս է, արդարացի չէ՞ ուրեմն մատերիալիզմի դէմ բարձրացած բողոքը. իրաւացի չէ՞ ուրեմն այն պահանջը, որ այսպիսի վնասակար հայեացքների տարածման առաջն առնուի հասարակական հեղինակութեան, իշխանութեան միջոցներով: Այս հարցին Պաուլսեն բացասական պատասխան է տալիս: Նա այն համոզումն ունի, թէ հասարակութիւնն

աշխատելով պետական կամ եկեղեցական բռնի միջոցներով տիրող ընկերական վիճակը պահպանել, աւելի է նպաստում մնասակար հայեացքների տարածուելուն: Մեր դաստիարակութեան մէջ հէնց նախկին եկեղեցական բռնապետութեան մնացորդներն են, որ մատերիալիզմին հող են պատրաստում. նրանք դարձնում են հովանաւորեալ և ստիպողական վարդապետութիւնը կասկածելի. կաղմուտ է այն համոզումը, թէ ալդ վարդապետութիւնն անկարող է ազատ մրցման մէջ իր գոյութիւնը պահպանել: Լոելեայն այնպէս է ընդունւում, թէ այն ճշմարտութիւնները, որոնք հիմնուած են բանականութեան և գիտութեան վրայ, կարօտ չեն իշխանութեան հովանաւորութեանը: Մենք կարող ենք ամենայն օր ամեն տեղ դիտել, թէ ինչպէս դպրոցներում աւանդուած և իշխանութեան հովանաւորութիւնը վայելող տեսութիւնները առաջին անգամ շփուելով ազատ, չհովանաւորուած, նոյն իսկ արհամարհուած և հալածուած հայեացքների հետ, խորտակւում են: Երիտասարդը, որին դպրոցը, ծնողական տունը և եկեղեցին աւանդել են եկեղեցական-աւանդական ուսումը, մտնում է նոր շրջաններ. գործարանում, աւաւտրական ասպարիզում, համալսարանում նա շփուում է ընկերների հետ, ծանօթանում է հանրամատչելի փիլիսոփայական գրականութեանը, որի մէջ բնութիւնը և պատմութիւնը ներկայացրած է նախապաշարուններին և կղերականութեանը թշնամի տեսակէտից: Երիտասարդի աչքերից կեղեկն ընկնում է:

Նա մտածում է, թէ այն ամենը խաբէութիւն է, ինչ որ իր գլուխը խցկել են. աշխարհը իսկզբանէ անտի գոյութիւն ունի, մարդն ուրիշ ոչինչ է, եթէ ոչ առանձին կերպով զարգացած կենդանական մի տեսակ, բարոյական օրէնքները և հանդերձեալ կեանքը տէրտէրների հնարած բաներն են յիմարներին սարսափեցնելու համար: Հայեացքների այսպիսի յեղափոխութիւնը առանց ազդեցութեան չի մնում կենցաղի վերաբերմամբ:

Նոր լուսաւորուածը շարունակում է փիլիսոփայութիւնը այս կերպով. քանի որ ոչ Աստուած կայ և ոչ յաւիտենական կեանք, ուրեմն ես կարող եմ ինձ ներելի համարել և անել, ինչ որ ուզում եմ: Այն մարդիկը, որոնք ամեն կերպ աշխատում են ժողովրդի համար կրօնը պահել, իրանք էլ անշուշտ իրանց անձի վերաբերմամբ ուրիշ կերպ չեն վարում. թոյլատրելի են համարում այն, ինչ որ հաճելի է: Եւ ահա նորադարձն սկսում է, սկզբում թերևս ոչ առանց ներքին դիմա-

դրութեան, անել այն, ինչ որ կրօնը և բարոյական կանոնները արգելել էին. ոտնակոխ է անում աւանդական բարքերը, արհամարհում է խիղճը, և այս համարում է ազատութեան և շուսամտութեան նշան:—

Թէ այս յեղափոխութիւնը իր բոլոր հետեանքներով տեղի է ունենում ամենայն օր հազար տեսակ կրկնութիւններով մեր շուրջը, այդ մասին ոչ մի կասկած չի կարող լինել. կասկած չկայ նաև, որ ցանկալի է դրա առաջն առնել: Խնդիրն այն է միայն, թէ ինչ միջոցներով պէտք է այդ կատարուի: Պառուլէն պատասխանում է. միմիայն նրանով, որ մենք համարձակ ընդառաջենք այդ հոսանքին, աւելի հիմնաւոր և հաստատուն հայեացքներ տարածելով: Նախ և առաջ անհրաժեշտ է աւանդական վարդապետութիւնների հնացած և փտած մասերը այլ ևս չզործածել անշխարհահայեացքի շէնքի կառուցման համար. միակ մի մասը կարող է ամբողջ շէնքի խորտակման պատճառ դառնալ: Անվտանգութիւնը, որ ուղղում է դէպի իշխանութեան հովանաւորած մի դպրոցական ճշմարտութիւն, կարող է անդառնալի կերպով խախտել դէպի բոլոր դպրոցական ճշմարտութիւնները գոյութիւն ունեցող հաւատը:

Անհրաժեշտ է նաև բարոյականութիւնը հիմնել սեփական բարոյական զգացողութեան և կամեցողութեան վրայ: Մեր աւանդական բարոյական դաստիարակութեան եղանակը վտանգաւոր է բարոյականութեան համար. նա ներշնչում է այն թիւր հայեացքը, թէ բարոյական օրէնքը ուրիշ բան չէ, եթէ ոչ մի գումար կամայական պատուէրների և արգելքների, որոնցով մեզ ծանրաբեռնել է անդր աշխարհային մի քմահաճոյ պետ: Այսպիսի հայեացքի հետեանքն այն է լինում, որ երբ վերանում է հաւատը դէպի մի այդպիսի պետի գոյութիւնը, վերանում է նաև նրա կարծեցեալ պատուէրների նշանակութիւնը: Սակայն այս հայեացքը սխալ է. բարոյական օրէնքը մեր բնութեան խորթ չէ, ընդհակառակն հենց նրա օրէնքն է, մեր սեփական էութեան օրէնքը: Բարոյական օրէնքներին բնազանցական նշանակութիւն կը վերագրեն, թէ ոչ, այդ միևնոյն է, նրանք նախ և առաջ մարդկային կեանքի օրէնքներն են, այն մտքով, որ նրա առողջութեան և բաղդաւորութեան պայմաններն են: Իրերի բնական ընթացքի մէջ անհատները և ժողովուրդները բարոյական օրէնքները ոտնակոխ անելով իրանց մատնում են թշուառութեան և կորստի, մինչդեռ նրանց հետեւելով, բաղդաւոր և բարգաւաճ կեանք են վարում:

Որքան տևէ աշխարհը, այնպէս, ինչպէս որ կայ, և մարդկային-
 բնութիւնը մնայ այնպէս, ինչպէս որ մինչև այժմ եղել է,
 բարոյական օրէնքներն էլ նշանակութիւն կունենան: Իրակա-
 նութիւնն ինչպէս ուզում են բացատրեն. ատոմներէց, թէ
 աննիւթ գոյացութիւններէց, կամ թէ ուրիշ կերպ, մատերիալիզ-
 մի միակ խնդիրն այստեղ այն է, որ անկասկած իրողութիւնները
 իւր միջոցներով բացատրէ. եթէ նա իրաւունք ունի, եթէ
 հոգեկան կեանքը ուղեղի գործունէութիւն է, ապա ուրեմն նրա
 գործն է նաև բարոյական օրէնքները ներկայացնել իբրև
 մարդկային ուղեղին յատուկ առանձին տեսակ գործունէութիւն,
 ինչպէս տրամաբանական օրէնքներն են: Նա պէտք է փորձէ
 ցոյց տալ, թէ ինչպէս որոշ բլիշների կազմութիւնն ու դասա-
 ւորութիւնը առաջ է բերում այնպիսի ձգտումներ և զգացում-
 ներ, այնպիսի դատավճիռ ուրիշների և սեփական վարմունքի
 մասին, որ մենք բարոյական ենք անուանում: Կը յաջողութիւն
 արդեօք այդ, ի հարկէ առանձին խնդիր է. իսկ մինչև այդ
 մատերիալիզմը ևս պէտք է ընդունէ բարոյական օրէնքները
 այնպէս, ինչպէս որ կան:

ԴՐ. Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

(Վերջը միւս անգամ)